 Ոչ պետական կառույցներ
 Մասնավոր հատված
 Դատարաններ
 Բյուջե
 Որոշումներ, նորմատիվ ակտեր
 Մարդիկ
 Սոցիալական
 Կրթություն
 Առողջապահություն
 Նորությունների արխիվ
 Դղումներ

Գիմեր մեզ

ՈՒՄ Մարզպետարան
 Համակարգի կառավարչին

Հաղորդագրություն

!!! Խնդրում ենք մուտք գործել համակարգ: Նոր այցելումներին ամիսաձեռն է գրանցվել:

Մուտք հասնարգ

Օգտվող
 Նշանաբառ
 Հիշեցրեք տվյալներս
 Գրանցվել

Իմ փոստարկղը
 Հայտարարություններ
 Քննարկումներ
 Շաաայություններ
 Նամակներ...

Նկար 21. «Գիմեր մեզ»

Աջ ուղղահայաց ցուցակ

1. **«Իմ փոստարկղը»** անվանման վրա սեղմելիս բացվում է էջ (տես նկար 22)՝ «Խնդրում ենք մուտք գործել համակարգ» տողով: Այդ նպատակի համար էջի աջ անկյունում կա ուղղանկյունաձև տարածք՝ «Մուտք համակարգ» նակագրությամբ: Առաջին անգամ էջ մուտք գործելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ սեղմելով «Գրանցվել» անվանման վրա, որից հետո կհայտնվի Անձնական տվյալներ էջը, որը պարունակում է լրացման ենթակա ավելի քան 20 տարբեր բաժիններ տվյալներ գրանցելու համար: Այն բաժինները, որոնց ձախ կողմում կա կարմիր աստղանիշ (*), պարտադիր է լրացնել, գրանցելով հավաստի տվյալներ: Ծննդյան ամսաթիվը բաժինը ճիշտ լրացնելու համար սեղմեք աջ կողմի վանդակը և սլաքների օգնությամբ գտեք Ձեր ծննդյան տարեթիվը, ամսաթիվն ու օրը: Ընտրելուց հետո տվյալները կհայտնվեն «Ծննդյան ամսաթիվը» տողում: Այն բաժինները, որոնց աջ կողմում կան փոքրիկ սլաքով կոճակներ, ինչպես օրինակ «Երկիր» բաժինը, նախատեսված են առավել մասնակի տվյալներ գրանցելու համար: Անհրաժեշտ է սեղմել կոճակն ու ընտրել Ձեզ համապատասխան տողը:

- **«Լրացուցիչ տեղեկություններ»** տողում կարող եք լրացնել Ձեր նախընտրած տեղեկությունները:
- **«Փոստարկղի օգտվող»** հատվածում, որն աջ կողմում ունի «@region.am» նշումը, հնարավորություն է տալիս ստանալ էլեկտրոնային փոստի հասցե: Այդ նպատակով լրացրեք էլեկտրոնային հասցեի սկզբնամասը ըստ ցանկության, ապա լրացրեք «Օգտվող», «Նշանաբան» և «Կրկնեք Նշանաբանը» բաժինները: Նշանաբանը մուտքագրելիս էկրանին տառերի ու թվերի փոխարեն երևում են միայն փոքր գծիկներ նշանաբանի գաղտնիության պահպանման նպատակով: Այս ամենն ավարտելուց հետո սեղմեք «Գրանցվել» կոճակը, որից հետո կբացվի «Անձնական Տվյալներ» էջը համակարգ ներմուծված տվյալներով:

«Փոխել տվյալները» անվանման վրա սեղմելով կարող եք կատարել անհրաժեշտ փոփոխություններ: Կատարված փոփոխությունները կփոխարինեն նախկին տվյալներին «Գրանցել» տողը սեղմելուց հետո:

Էլեկտրոնային փոստի հասցեն գրանցելուց հետո **«Իմ փոստարկղը»** անվանման վրա սեղմելով կարող եք օգտվել դրա ծառայություններից: Լրացրեք «Օգտվողի անուն» և «Նշանաբան» բաժինները և սեղմեք **«Մուտք»** կոճակը: Բացված էջում կտեսնեք անհատական նամակների արկղի ողջ պարունակությունը: Փոստարկղը կարող եք օգտագործել նամակներ գրելու և ստանալու, ինչպես նաև՝ նկարներ և այլ տիպի էլեկտրոնային տվյալներ ուղարկելու համար: Փոստարկղն ունի հետևյալ բաժինները՝ գործածության իրենց ձևերով:

- «Հեռացնել» անվանման վրա սեղմելով կարող եք հեռացնել, ջնջել ստացված նամակները (նախօրոք ընտրելով համանուն տողը), հայտնվում է հիշեցում, սեղմեք «OK» և նամակը կջնջվի:
- «Չեմ կարդացել» կտեսնեք, թե քանի չկարդացած նամակ ունեք՝ դրանց թիվը նշելով աջ կողմում:
- «Պատրաստել հաղորդագրություն» անվանման վրա սեղմելով բացվում է էջ, որտեղից կարելի է նամակ, նկար կամ այլ տիպի հաղորդագրություն ուղարկել մեկ կամ ավելի հասցեատերերի՝ օգտագործելով «Հասցեատեր» և «Պատճեն» հատվածները: Մեկից ավելի էլեկտրոնային հասցեներ գրանցելիս դրանք պետք է տարանջատել ստորակետներով: «Թեմա» հատվածում գրեք հաղորդագրության վերնագիրը: «Հավելվածներ» հատվածը նախատեսված է հաղորդագրությանը տարբեր փաստաթղթեր կցելու համար: Սեղմեք «Browse» կոճակը, բացված պատուհանում ընտրեք ուղարկվելու ենթակա նյութը եվ սեղմեք «Open» կոճակը: Որից հետո, եթե նամակն ավարտել եք, սեղմեք էջի ներքևում «Ուղարկել» կոճակը:

Էջի աջ անկյունի «Ելք» անվանման վրա սեղմելով կարող եք դուրս գալ համակարգից:

Հիշեք, որ «Նշանաբառ» հատվածում մուտքագրված տվյալն անհրաժեշտ է հետագայում էլեկտրոնային հասցեն օգտագործելիս, ուստի գրառեք այն՝ չմոռանալու համար: Եթե, մոռացել եք այն, ապա օգտագործեք «Մուտք համակարգ» բաժնի «Մոռացել էք նշանաբառը» տողը, որը սեղմելով կբացվի «Օգտվելու տվյալների հիշեցում» էջը: Այստեղ ներմուծեք օգտվողի անունը, որից հետո էջի աղմինիստրատորը կուղարկի մոռացված նշանաբանը՝ «* Էլ-փոստ» տիպի թում նախկինում արդեն ներմուծված էլեկտրոնային հասցեով:

Address:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզպետարան	Գերատեսչական մարմիններ	ՏԻՄ	Համայնքներ	Ելակետ	ԳՏԳ	Մեր մասին	Դիմեք մեզ
-------------	------------------------	-----	------------	--------	-----	-----------	-----------

Ընդհանուր տեղեկություններ

Ոչ պետական կառույցներ

Մասնավոր հատված

Դատարաններ

Բյուջե

Որոշումներ, նորմատիվ ակտեր

Մարդիկ

Սոցիալական

Կրթություն

Առողջապահություն

Նորությունների արխիվ

Հղումներ

☰ **Ներդրում ենք մուտք գործել համակարգ**

Մուտք ՀԱՄԱԿԱՐԳ

Օգտվող

Նշանաբառ

Հիշեցրեք տվյալներս
Գրանցվել

Մուտք

Իմ փոստարկղ

Հայտարարություններ

Քննարկումներ

Շատայություններ

Նամակներ

Գրանցվել ընդունելության

Աշխարհագրական

Որոմել

Նկար 22. «Իմ փոստարկղը»

II. «Հայտարարություններ» անվանման վրա սեղմելիս բացվում է էջ (տես նկար 23), ուր գետեղված են տարբեր բնույթի հայտարարություններ: «Արխիվ» անվանման վրա սեղմելիս բացվում է «Հայտարարությունների արխիվ» էջը: պատուհանին սեղմելով կարող եք ընտրել հաջորդ հայտարարությունները, եթե այդպիսիք կան:

Address: <http://kotayk.region.am/egov/dispatcher>

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՂԱՄԱԿԱՐԳ

Մարզպետարան | Գերատեսչական մարմիններ | ՏԻՄ | Համայնքներ | Ելակետ | ՀՏԳ | Սեր մասին | Դիմեք մեզ

Հայտարարություններ Արխիվ

Իմ փոստարկղը

Հայտարարություններ

Քննարկումներ

Օտոապրություններ

Նամակներ

Գրանցվել ընդունելության Աշխարհագրական Որոմել

Ընդհանուր տեղեկություններ
 Ոչ պետական կառույցներ
 Մասնավոր հատված
 Դատարաններ
 Բյուջե
 Որոշումներ, Որոմատիվ ակտեր
 Մարդիկ
 Ատղիակական
 Կորուսյուն
 Ատուցապահություն
 Նորությունների արխիվ
 Հղումներ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՍԿԻՑԻՑԵՅԱՐ ՈՒՄՈՒՄԱԿԱՆ ՕՐԿՈՂԻ Կրթական զարգացման ակադեմիան միացյալ կանոնների միջազգային Չարգացման Գործակալության (USAID) Ֆինանսական աջակցությամբ հայտարարում է «Երիտասարդ լիդերներ» 2004a. ամառային ծրագրերի մրցույթ: Կլիմեն երեք տարբեր ամառային ծրագրեր էվրոպայում, որոնց մասնակիցներին կուրսավորեն (USAID)/Հայաստան գրասենյակի կողմից: Յուրաքանչյուր ծրագրի համար կընդունվեն չորս մասնակիցներ: Ընտրված ծրագրերը ել ենթկնումը կհաստատվեն հետագայում: Այս ծրագրերին մասնակցելու ցանկումներին հնարավորություն կտա ավելի ակտիվորեն մեղադավելու համայնքային ել զարգացման հասարակության ուսուցման մեջ ել նպաստել: Հաստատման հարցազեռությունում մտրվողալարության զարգացման գործընթացին: Դիմելու իրավունք ունեն տարբեր երիտասարդական կազմակերպություններ ներկայացնող լիդերներ, որոնք մեղադավված են երեք թաճմաթիվ հասարակական ծրագրերին: Անգլերենի հնագույնումը պարտադիր է: Օրագրերը իրականացվելու են անգլերեն կեզվով, ուստի բոլոր դիմումները պետք է լրացվեն անգլերենով: Գործընթացը թաղկացած է հետնվյալ փուլերից՝ 1.Տեսուհ 2.Ներկայացված դիմումի ուսումնասիրություն 3.Հարցազույց: Կոտայքի մարզից անանակցել ցանկացողները կարող են դիմել հետնվյալ հասցեով՝ humanrights@kotayk.region.am

Հայտարարություն
 Հայտարարված է 2004-06-16
 Վերջին ժամկետը 2004-11-12

Նկար 23. «Հայտարարություններ»

III. «Զննարկումներ» անվանման վրա սեղմելիս բացվում է «Զննարկումների ամբիոն» էջը (տես նկար 24): Այս բաժնում կարող եք ներկայացնել կարծիք շրջանառության մեջ գտնվող ՀՀ օրենքների նախագծերի, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում իրականացվող գործընթացների վերաբերյալ:

Յուրաքանչյուր նոր քննարկում ունի քվեարկելու համար նախատեսված որոշ քանակի հարցեր՝ մի քանի հավանական պատասխաններով, որոնց ձախ կողմում կան փոքր շրջաններ՝ նախընտրելի պատասխանը նշելու համար: Կարելի է նշել մի քանի տարբերակներից միայն մեկը:

Էջի ներքևում նշված է, որ քվեարկությանը մասնակցելու համար պետք է մուտք գործեք համակարգ, օգտագործելով Ձեր արդեն գրանցված «Օգտագործողի անունը» և «Նշանաբառը»: Մուտք գործելուն պես էջի ներքևում կհայտնվեն «Ներկայացնել» և «Վերականգնել» կոճակները: Քվեարկությունն ավարտելուց հետո սեղմեք «Ներկայացնել» կոճակը:

«Արխիվ» անվանման վրա սեղմելիս բացվում է Զննարկումների արխիվ էջը, որտեղ ներկայացված են նախկինում կատարված քննարկումների արդյունքները հնգական համակարգով:

Address: <http://lori.region.am/egov/dispatcher>

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՅԱՄԱԿԱՐԳ

Մարզպետարան | Գերատեսչական մարմիններ | ՑՄՍ | Համայնքներ | Ելակետ | ԴՑԴ | Մեր մասին | Դիմեք մեզ

Ընդհանուր տեղեկություններ
Ոչ պետական կառույցներ
Մասնավոր հատված
Հատարաններ
Բյուջե
Որոշումներ, նորմատիվ ակտեր
Մարդիկ
Սոցիալական
Կրթություն
Առողջապահություն
Նորությունների արխիվ
Հղումներ

Քննարկումների ամբիոն

Տվեք Ձեր կարծիքը
Քննարկման քննարկ չեն ներդրվել

ՄՈՒՏԵ ՀԱՍՏԱԿԱՐԳ

Օգտվող
Նշանաբառ
Հիշեցրեք սույլա մերս
Գրանցվել
ՄՈՒՏԵ

Իմ փոստարկը
Հայտարարություններ
Քննարկումներ
Ծառայություններ
Նամակներ
Գրանցվել ընդունելության
Աշխարհագրական
Որոմել

Սկար 24. «Քննարկումներ»

IV. «**Ծառայություններ**» անվանման վրա սեղմելիս բացվում է «Ծառայությունների տեսակներ» էջը (տես նկար 25), որը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- «**Ցանցային**» անվանման վրա սեղմելիս բացվում է համանուն վերնագրով էջ, որը ներկայացնում է տրամադրվող ծառայությունների ցանկը (Գրանցվել ընդունելության, Իմ փոստարկը, Սոցիալական և Նամակներ): Սեղմելիս համապատասխան ծառայության անվանման վրա բացվում է համանուն էջը: Նրանց մասին մանրամասն տեղեկությունները ներկայացված են ձախ և աջ ուղղահայաց ցուցակների բաժնում:
- «**Ավանդական**» անվանման վրա սեղմելիս բացվում է համանուն էջը, որտեղ ներկայացված են մարզպետարանի տեղեկատվական կենտրոնի կողմից տրամադրվող անվճար ծառայությունների ցանկը:

Address: <http://lori.region.am/egov/dispatcher>

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՅԱՄԱԿԱՐԳ

Մարզպետարան | Գերատեսչական մարմիններ | ՑՄՍ | Համայնքներ | Ելակետ | ԴՑԴ | Մեր մասին | Դիմեք մեզ

Ընդհանուր տեղեկություններ
Ոչ պետական կառույցներ
Մասնավոր հատված
Հատարաններ
Բյուջե
Որոշումներ, նորմատիվ ակտեր
Մարդիկ
Սոցիալական
Կրթություն
Առողջապահություն
Նորությունների արխիվ
Հղումներ

Ծառայությունների տեսակներ

Ցանցային

Տվյալ համակարգը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին, ծեծնարկատերերին, այլ շահագրգիռ անձանց օգտվելու առցանց մի շարք ծառայություններից, այդ բոլոր անմիջական դիմում մարզպետարանի ցանկացած ծառայողին, հայտարարությունների տեղադրում, մասնակցություն քննարկումների: Այս միջոցով տրամադրվող ծառայությունների ցանկը ընդլայնվելու է համակարգի զարգացմանը զուգահեռաց:

Ավանդական

Մարզպետարանի ինֆունետրոնի կողմից դիմորդներին տրամադրվում են անվճար տեղեկատվական ծառայություններ:

Իմ փոստարկը
Հայտարարություններ
Քննարկումներ
Ծառայություններ
Նամակներ
Գրանցվել ընդունելության
Աշխարհագրական
Որոմել

Սկար 25. «Ծառայություններ»

V. «Նամակներ» անվանման վրա սեղմելիս բացվում է «Փաստաթղթերի ձևեր» էջը (տես նկար 26), այնտեղ ներկայացված են տարաբնույթ դիմումների ձևեր: Ծառայությունից օգտվելու կամ ընթացքը տեսնելու համար անհրաժեշտ է մուտք գործել համակարգ, իսկ նոր այցելուներին անհրաժեշտ է գրանցվել: Համապատասխան դիմումի անվանման վրա սեղմելիս բացվում է տվյալ դիմումի էջը: Անհրաժեշտ վանդակները լրացնելիս սեղմելով «Տպվող տարբերակը» կոճակը կարող եք տեսնել դիմումն ամբողջությամբ: Սեղմելով «Վերադառնալ» կոճակին կվերադառնաք նախորդ էջը: Սեղմելով «Ցուցադրել» կոճակը կարող եք տեսնել դիմումը: Սեղմելով «Ներկայացնել» կոճակը կվերադառնաք «Նամակներ» էջը, որտեղ «Ներկայացված փաստաթղթեր» բաժնում կարող եք տեսնել ձեր կողմից ներկայացված դիմումների կարգավիճակը: Դիմումի պատասխանի առկայության դեպքում անհրաժեշտ է սեղմել «Պատասխանը» կոճակը:



Նկար 26. «Նամակներ»

VI. «Գրանցվել ընդունելության» անվանման վրա սեղմելով կբացվի նույնանուն էջ (տես նկար 27), որում ընդունելության գրանցվելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել, նշելով Ձեր պաշտոնը: «Թեմա» հատվածում լրացրեք Ձեր հաղորդագրության բացատրությունը: «Նկարագրություն» հատվածում շարադրեք հաղորդագրությունը: «Ում» հատվածում ընտրեք տվյալ հաղորդագրության հասցեատիրոջը՝ համապատասխան ոլորտից և համապատասխան պաշտոնը զբաղեցնող, որից հետո ուղարկեք այն՝ սեղմելով «Գրանցել» կոճակը: «Ցուցադրել» կոճակը սեղմելով կարող եք ծանոթանալ ձեր ընդունելության դիմում(ներ)ի կարգավիճակին:

Address: <http://lori.region.am/egov/dispatcher>

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՀԱՄԱԿԱՐԳ

Սարգսյանցի Գերատեսչական մարմիններ ՏԻՄ Համայնքներ Ելակետ ԴՅԳ Սեր մասին Դիմեք մեզ

Ընդհանուր տեղեկություններ
Ոչ պետական կառույցներ
Մասնավոր հատված
Դատարաններ
Բյուջե
Որոշումներ, նորմատիվ ակտեր
Մարդիկ
Սոցիալական
Կրթություն
Առողջապահություն
Նորությունների արխիվ
Դղումներ

Գրանցվել ընդունելության

Ընդունելությունը գրանցվում է մարդկանց, որոնք համակարգում գրանցված են որպես համապատասխան պաշտոն ունեցող անձինք

Քննա

Նկարագրություն

Իմ

Ընդունելության գրանցվելու համար մուտք գործեք համակարգ: Նոր այցելումներին անհրաժեշտ է գրանցվել:

Մուտք հասնելու

Օգտվող
Նշանաբան
Դիմեք

Իմ փոստարկը
Հայտարարություններ
Քննարկումներ
Ծառայություններ
Նամակներ

Գրանցվել ընդունելության
Աշխարհագրական
Որոշում

Նկար 27. «Գրանցվել ընդունելության»

VII. «Աշխարհագրական» անվանման վրա սեղմելիս բացվում է նույնանուն էջը (տես նկար 28), որում ներկայացված է մարզի քարտեզը: Նշելով «Քարտեզ», «Քաղաքաշինական հատակագիծ», «Ջրամատակարարման/հեռացման սխեմա», «Կադաստրային քարտեզ», «Կազմակերպություններ» կամ «Համայնքներ» անվանումները և պատկերված քարտեզի վրա ընտրելով որևէ քաղաք, կտեսնեք տվյալ քաղաքի քարտեզը, քաղաքաշինական հատակագիծը և այլն:

Address: <http://lori.region.am/egov/dispatcher>

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՀԱՄԱԿԱՐԳ

Սարգսյանցի Գերատեսչական մարմիններ ՏԻՄ Համայնքներ Ելակետ ԴՅԳ Սեր մասին Դիմեք մեզ

Ընդհանուր տեղեկություններ
Ոչ պետական կառույցներ
Մասնավոր հատված
Դատարաններ
Բյուջե
Որոշումներ, նորմատիվ ակտեր
Մարդիկ
Սոցիալական
Կրթություն
Առողջապահություն
Նորությունների արխիվ
Դղումներ

- Քարտեզ
- Քաղաքաշինական հատակագիծ
- Ջրամատակարարման/հեռացման սխեմա
- Կադաստրային քարտեզ
- Կազմակերպություններ
- Համայնքներ



Իմ փոստարկը
Հայտարարություններ
Քննարկումներ
Ծառայություններ
Նամակներ
Գրանցվել ընդունելության
Աշխարհագրական
Որոշում

Նկար 28. «Աշխարհագրական»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՀԱՄԱԿԱՐԳ

VIII. «Որոնել» տողը սեղմելով կբացվի ՀՀ մարզերի անուններով և նշման վանդակներով «Մարզեր» անունը կրող բաժինն ու «Ենթաբաժիններ» խորագրով, նույնպես նշման վանդակներ պարունակող բաժինը (տես նկար 29): Այս երկուսի տակ կա նեղ ու երկար մի հատված՝ աջ կողմում «Որոնել» մակագրությամբ կոճակով:

Տվյալ էջը նախատեսված է ՀՀ մարզերի վերաբերյալ տեղեկություններ որոնելու համար: Սկզբից նշեք մարզը (կամ մարզերը), որի մասին տեղեկություն է անհրաժեշտ, ապա նշեք անհրաժեշտ ենթաբաժինը (կամ ենթաբաժինները): Որոնման բոլոր պայմաններն ընտրելուց հետո հայերեն տառատեսակով որոնման համար նախատեսված տիրույթում հավաքեք որոնելիք բառը և սեղմեք «Որոնել» կոճակը: Եթե որոնման օբյեկտը երբևէ գրանցվել է ցանցում՝ ապա այն կհայտնվի որոնման բառը պարունակող այլ տեղեկատվության հետ միասին էկրանի ներքևի մասում: Սեղմեք անհրաժեշտ տողը՝ տեղեկատվությանը ծանոթանալու համար:

Նկար 29. «Որոնել»

Address:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ Ի-ՂԱՄԱԿԱՐԳ

Մարզպետարան

Գերատեսչական մարմիններ

ՏՄՄ

Համայնքներ

Ելակետ

ԴՑԴ

Մեր մասին

Դիմեք մեզ

Ընդհանուր տեղեկություններ
Ոչ պետական կառույցներ
Մասնավոր հատված
Դատարաններ
Բյուջե
Որոշումներ, նորմատիվ ակտեր
Մարդիկ
Սոցիալական
Կրթություն
Ստորջապահություն
Նորությունների արխիվ
Դղումներ

Եղանակ

Մետեո TV

ԳլԲ


RUR	1	16.80	19.00
CAD	1	387.70	392.30
CHF	1	409.70	414.70
EUR	1	622.70	630,20

Մարզեր

Լոռի <input type="checkbox"/>	Սյունիք <input type="checkbox"/>
Շիրակ <input type="checkbox"/>	Արագածոտն <input type="checkbox"/>
Արմավիր <input type="checkbox"/>	Վայոց Ձոր <input type="checkbox"/>
Գեղարքունիք <input type="checkbox"/>	Տավուշ <input type="checkbox"/>
Արարատ <input type="checkbox"/>	Կոտայք <input type="checkbox"/>
	Նախարար <input type="checkbox"/>

Ենթաբաժիններ

Կազմակերպություններ <input type="checkbox"/>
Համայնքներ <input type="checkbox"/>
Մարդիկ <input type="checkbox"/>
Ընդհանուր տեղեկություններ <input type="checkbox"/>
Նորություններ <input type="checkbox"/>
Դատական գործեր <input type="checkbox"/>
Որոշումներ, նորմատիվ ակտեր <input type="checkbox"/>
Սոցիալական <input type="checkbox"/>
Ծառայություններ <input type="checkbox"/>
Հայտարարություններ <input type="checkbox"/>



+ (պարունակի); և (չպարունակի); +! (կամ պարունակի); և! (կամ չպարունակի)

Որոնել

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրոնային պատրաստվածության սահմանումը

Երկրի էլեկտրոնային պատրաստվածությունը բնորոշվում է գոյություն ունեցող անհրաժեշտ ֆիզիկական ենթակառուցվածքով, որը պայմանավորված է հասարակության բոլոր շերտերում և տարբեր ոլորտներում՝ գործարար աշխարհում, կրթության բնագավառում, կառավարությունում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (SՀS*) ներդրմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության շուկայում առկա բարձր մրցակցությամբ, այդ շուկան կարգավորող օրենքներով և օտարերկրյա ներդրումների և առևտրի ազատությամբ:

Էլեկտրոնային պատրաստվածությունը բնորոշվում է 5 կատեգորիաներով, որոնք են՝

- Ցանցից օգտվելու հնարավորությունը բնորոշվում է տեղեկատվական ենթակառուցվածքով, ինտերնետի առկայությամբ և մատչելիությամբ, համակարգիչների և համակարգչային ծրագրերի ապահովմամբ, ինչպես նաև ցանցի արագագործությամբ և ծառայությունների որակով:
- Ցանցային ուսուցումը պայմանավորված է միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգերում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմամբ, դրանցով կրթության բարձր մակարդակի ապահովմամբ և այդ ասպարեզում աշխատուժի զարգացմամբ:
- Ցանցային հասարակությունը բնորոշվում է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներից աշխատանքային պայմաններում և

* SՀS՝ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ

առօրյա կյանքում հասարակության և նրա տարբեր շերտերի օգտվելու հնարավորությամբ, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության առկայությամբ:

Ցանցային տնտեսությունը պայմանավորված է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների աշխատուժի շուկայի զարգացման մակարդակով, էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային կառավարության համակարգերի առկայությամբ:

Ցանցային քաղաքականությունը պայմանավորված է երկրում հեռահաղորդակցության շուկան կարգավորող օրենքների առկայությամբ և կիրառմամբ, ինչպես նաև տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում առևտրի և օտարերկրյա ներդրումների ազատությամբ:

Հայաստանի էլեկտրոնային պատրաստվածությունը

«Հայաստանի էլեկտրոնային պատրաստվածության գնահատում, 2003թ.» ուսումնասիրությունն իրականացվել է ըստ Հարվարդի համալսարանի Միջազգային զարգացման կենտրոնի մշակած մեթոդոլոգիայի (www.cid.harvard.edu): Գնահատումը կատարվել է ըստ վերը նշված հինգ հիմնական կատեգորիաների և 19 ենթակատեգորիաների, որոնցից յուրաքանչյուրը վերլուծվել է առանձին և համադրվել առաջադրված զարգացման 4 հնարավոր փուլերից մեկին (4-ը՝ առավելագույն):

Ներկայացնում ենք ուսումնասիրության արդյունքների ամփոփումն աղյուսակի տեսքով: Այն դեպքերում, երբ Հայաստանի համար առկա են եղել զարգացման երկու փուլերին համապատասխանող չափանիշներ, զուգահեռաբար, նշվել են երկուսն էլ, ավելի մուգ գույնով՝ առավել բնորոշը:

Ցանցից օգտվելու հնարավորություն	1	2	3	4
Տեղեկատվական ենթակառուցվածք				
Ինտերնետի առկայություն				
Ինտերնետի մատչելիություն				
Ցանցի արագություն և որակ				
Համակարգչ. սարքավորումներ, ծրագրային ապահովում				
Ծառայություն և օժանդակում				

Ցանցային ուսուցում	1	2	3	4
Դպրոցների ՏՀՏ-ից օգտվելու հնարավորություն				
ՏՀՏ-ով կրթության ամրապնդումը				
ՏՀՏ աշխատուժի զարգացումը				

Ցանցային հասարակություն	1	2	3	4
Մարդիկ և կազմակերպությունները ցանցում				
Տեղին առնչվող բովանդակություն				
ՏՀՏ-ն ամենօրյա կյանքում				
ՏՀՏ-ն աշխատավայրում				

Ցանցային տնտեսություն	1	2	3	4
ԿՀՏ զբաղվածության հնարավորությունները				
Գործարար-սպառող (B2C) էլեկտրոնային առևտուր				
Գործարար-գործարար (B2B) էլեկտրոնային առևտուր				
Էլեկտրոնային կառավարություն				

Ցանցային քաղաքականություն	1	2	3	4
Հեռահաղորդակցության կառավարում				
ՏՀՏ առևտրային քաղաքականություն				

ՑԱՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՆԱՐՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական ենթակառուցվածք. Հայաստանում հեռահաղորդակցության համակարգը հանդիսանում է կանոնակարգվող մենաշնորհ ներկայացված մեկ մասնավոր ձեռնարկության՝ Արմենտելի միջոցով: Հեռահաղորդակցության համակարգը կառավարվում է «Հեռահաղորդակցության մասին» օրենքով (ընդունվել է 1998թ.): Արմենտելն ապահովում է հիմնական հեռահաղորդակցության ծառայությունները ներառյալ հասարակական և բջջային հեռախոսակապերը, ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կապի ծառայությունները, GSM և paging համակարգչային ծառայությունները:

Ինտերնետի առկայությունը. Հայաստանում գործում են ավելի քան 10 ինտերնետային ծառայություն ապահովողներ (ԻԾԱ): Այսինքն 1,000,000 բնակչին բաժին է ընկնում՝ 3.1 ԻԾԱ: Տեղական ԻԾԱ-ներն առաջարկում են հեռախոսային համարի հավաքմամբ, ռադիոմոդեմային, օպտիկական և DSL ինտերնետային կապի հնարավորություններ:

Ինտերնետի մատչելիությունը. Հայաստանում հեռախոսավարձերն ինտերնետային մուտքի համար ավելի բարձր են, քան միջազգային գները: Դրանք տատանվում են ամսական 30-50 ԱՄՆ դոլարի սահմաններում:

Յանցի արագությունը և որակը. Թվային հեռախոսակայաններում տեղական հեռախոսագանգերի ավելի քան 90%-ը հաջողված են, իսկ ձայնի որակը գերազանց է, մինչդեռ նույնը չի կարելի ասել ոչ թվային հեռախոսակայանների մասին: ԻԾԱ-ները ապահովում են մասն առանձնացված գծերով մուտք դեպի ինտերնետ:

Համակարգչային սարքավորումներ և ծրագրեր. Համակարգչային տեխնիկան առկա է Հայաստանում, բայց հիմնականում ներմուծվում է և մատչելի չէ միջին սպառողի համար: Ներկայումս գործում են շուրջ 10 հայրենական ձեռնարկություններ, որոնք մասնագիտացված են համակարգիչների հավաքմամբ և տեղադրումով: Ծրագրային արտադրությունը Հայաստանում ունի լայն տարածում և ապահովվում է տեղական արտադրողների միջոցով: Հայաստանում համակարգչային ծրագրեր արտադրող ընկերությունները 78-ն են, որոնցից 26-ն ունեն արտաքին ֆինանսավորում: Տեղական շուկայում համակարգչային ծրագրերի պահանջարկը բավարարվում է մոտ 90%-ով:

Ծառայություն և օժանդակում. Հիմնական հեռախոսագծերի տեղադրման տևողությունը 1-6 ամիս է: Առաջացած խնդիրներն ու թերությունները վերացվում են 1-5 օրվա ժամանակահատվածում: Երկրում առկա է համակարգչային մասնագետների, ծրագրավորողների, վեբ դիզայներների, ցանցային ադմինիստրատորների հսկայական պոտենցիալ, սակայն նրանց քանակի աճի միտումները ցածր են, ինչը պայմանավորված է ՏՀՏ շուկայում թույլ մրցակցությամբ:

ՑԱՆՑԱՅԻՆ ՈՒՄՈՒՑՈՒՄ

Դպրոցների ՏՀՏ-ից օգտվելու հնարավորություն. Հայաստանում ինտերնետ կապ ունեցող դպրոցների թիվն աճում է: Համապատասխան ծրագրեր են նախաձեռնել Կրթության և գիտության նախարարությունը (Կրթական ծրագրերի իրականացման կենտրոն՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ), «Փրոջեքթ Հարմոնի» ծրագիրը, «Բաց հասարակության ինստիտուտ» օժանդակության հիմնադրամը (OSIAF), «Միջազգային հետազոտություններ-

րի և փոխանակումների» խորհուրդը (IREX), «Ինտերնետային մուտք և ուսուցում» ծրագիրը (IATP), Ինտերնետ հասարակության համակարգչային ցանցավորման և ուսուցման կենտրոնը (ISOC) և այլ կազմակերպություններ: Արդյունքում մեծացել է համակարգիչների թիվը, ապահովվել է ինտերնետային մուտք մի շարք դպրոցներում, միաժամանակ իրականացնվել է ուսուցման գործընթաց:

ՏՀՏ-ով կրթության ամրապնդումը. Ուսուցիչների համակարգչային գրագիտությունը ցածր մակարդակի վրա է: Նրանց մի մասն ունի համակարգչային տարրական գիտելիքներ: Ներկայումս դպրոցներում իրականացվում են ինտերնետային և համակարգչային ուսուցման դասընթացներ կազմակերպելու և անցկացնելու ծրագրեր:

ՏՀՏ աշխատուժի զարգացումը. Վերը նշված միջազգային կազմակերպություններից մի քանիսն ապահովում են ՏՀՏ-ների վերաբերյալ ուսուցման հնարավորություններ: Հայաստանում լայնորեն տարածված են նաև կարճ և միջին տևողությամբ համակարգչային գրագիտության ուսուցման մասնավոր դասընթացները, որոնք մեծապես նպաստում են ՏՀՏ բնագավառում աշխատուժի վերապատրաստմանը :

ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ և կազմակերպությունները ցանցում. 2003թ. տվյալներով մոտավորապես 35,000 մարդ մշտապես օգտվում էր ինտերնետից, ինչը կազմում է բնակչության 1.06 %-ը: Իսկ ինտերնետից օգտվողների ընդհանուր թիվը կազմում է 75,000-80,000 մարդ, որը բնակչության 2.5 %-ն է: Այնուամենայնիվ, ներկայումս առկա է ինտերնետից օգտվողների թվի աճ:

Տեղին առնչվող բովանդակություն. Քիչ է ինտերնետային էջերի քանակը, որոնք կրում են տեղական թեմատիկ բնույթ: Այդ էջերից մի մասը ստեղծվել է արտերկրում՝ սփյուռքի կազմակերպությունների և անհատների ջանքերով: Տեղական կազմակերպությունների ինտերնետային էջերը մեծ մասամբ անգլերեն կամ ռուսերեն լեզվով են, քիչ են հայերեն լեզվով էջերը: Պետական կառույցների էջերը հիմնականում հայերեն են: Ինտերնետային էջերից շատերը ստատիկ են և թարմացվում են ոչ հաճախ: Շատ քիչ են առցանց (on-line) հրատարակությունները, լրաթերթերը և այլն:

ՏՀՏ-ն ամենօրյա կյանքում. Հանրային մեծաքանակ հեռախոսները կանոնավոր կերպով օգտագործում է հասարակության մեծ մասը, ինչը չի կարելի ասել բջջային հեռախոսների, ֆաքսերի, թվային հեռախոսների և համակարգիչների մասին, որոնք օգտագործում են սահմանափակ թվով մարդիկ: Հասարակության մեջ ինտերնետ սրճարաններից, ինտերնետ հեռախոսակապի կենտրոններից և այլ համակարգչային ծառայություններ մատուցող մասնա-

վոր ընկերությունների ծառայություններից օգտվողների թիվն ունի աճի միտում: Հասարակության իրազեկությունը ինտերնետի օգտագործման առումով ցածր է:

ՏՀՏ-ն աշխատավայրում. Աշխատավայրում սովորաբար առկա է հեռախոսներից օգտվելու անսահմանափակ հնարավորություն: Միջազգային կազմակերպություններից ֆինանսավորվող ծրագրերի մեծ մասն ունեն փոքր հեռախոսային կայաններ: Էլեկտրոնային փոստի և ինտերնետի հնարավորություններից աշխատողների օգտվելու պայմաններ ապահովված են հիմնականում միջին ու խոշոր մասնավոր ընկերություններում, ինչպես նաև Հայաստանում գործող միջազգային և ակտիվ տեղական հասարակական կազմակերպություններում: Իսկ փոքր բիզնեսի, տեղական հասարակական կազմակերպությունների, կառավարական ինստիտուտների մեծ մասում էլեկտրոնային փոստ առկա չէ:

ՑԱՆՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՏՀՏ զբաղվածության հնարավորությունները. Կրթական, գիտահետազոտական հաստատություններն հզոր ազդեցություն ունեն ՏՀՏ աշխատուժի ձևավորման և կայացման վրա: Ծրագրավորողի միջին տարեկան աշխատավարձը 8-10 անգամ բարձր է այլ ոլորտի աշխատողների աշխատավարձից, ինչը վկայում է այս մասնագետների մեծ պահանջարկի մասին:

Գործարար-սպառող էլեկտրոնային առևտուր. Հայաստանում էլեկտրոնային առևտուր գրեթե գոյություն չունի: Գաշտը կարգավորող օրենքների նախագծերը Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու ընթացքում են: Ձեռնարկություններից շատերն ունեն վեբ էջեր, բայց հիմնականում տեղեկատվությունը ստատիկ է ու թարմացվում է ոչ հաճախակի: Գործարքների մեծ մասը փաստաթղթային է:

Գործարար-գործարար էլեկտրոնային առևտուր. Գործարար պայմանավորվածությունները հիմնականում ձեռք են բերվում ուղղակի հանդիպումների ընթացքում, կամ օգտագործվում են ավանդական հաղորդակցության միջոցները (մամակներ, հեռախոս, ֆաքս):

Էլեկտրոնային կառավարություն. Պետական կառույցներում իրազեկության ցածր մակարդակը և համապատասխան օրենսդրական դաշտի բացակայությունը (Էլեկտրոնային փաստաթղթի, էլեկտրոնային ստորագրության վերաբերյալ օրենքներ) բացասական են անդրադառնում էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացմանը և սահմանափակում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներգրավումը կառավարման գործընթացում:

ՑԱՆՑԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հեռահաղորդակցության կարգավորում. Հայաստանի հեռահաղորդակցության համակարգը կարգավորվում է Հեռահաղորդակցության վերաբերյալ օրենքով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով ու կառավարության որոշումներով: Հեռահաղորդակցության ազատականացումն ու ՏՀՏ զարգացման ռազմավարությունը ՀՀ-ում զարգացման փուլում են:

ՏՀՏ առևտրային քաղաքականություն. Կառավարության կողմից առաջադրված տեխնիկական ստանդարտներ ՏՀՏ ծառայություններում չկան, բացառությամբ ինտերնետում լեզվի վերաբերյալ ստանդարտների: Ինտերնետի պաշտոնական հսկողություն և կանոնակարգում Հայաստանում գոյություն չունի:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրոնային կառավարության սահմանումը

Էլեկտրոնային կառավարությունը (Էլ-կառավարություն) իշխանության կառույցների կողմից իրենց գործառնության (այդ թվում՝ վարչական և դատա-իրավական), կառավարչական և գործադիր լիազորությունների իրականացման, ու նաև տեղեկատվության տնօրինման ու փոխանակման պրակտիկաներում այնպիսի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն է, ինչպիսիք են գլոբալ և լոկալ ցանցերը, ինտերնետը, շարժական հեռահաղորդակցության և տեղեկատվության էլեկտրոնային միջոցները: Էլ-կառավարությունը հնարավորություն է ընձեռում որակապես և քանակապես փոխակերպել, զարգացնել, միաժամանակ մատչելի դարձնել հարաբերությունները քաղաքացիների, նաև քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կառույցների (G2C - Government to Citizen), գործարարների (G2B - Government to Business), և իշխանության բոլոր թևերն ու պետական հատվածը ներկայացնող մարմինների միջև, ինչպես նաև վերջիններիս փոխառնչությունները՝ միմյանց միջև (G2G - Government to Government), որը ոչ պակաս կարևոր է:

ՏՀՏ-ների կիրառման ոլորտներն ու նպատակները «Էլ-կառավարության» տեսլականով բազմաթիվ են. կառավարության կողմից քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների մատուցման դյուրացումը, հետևաբար՝ դրանց քանակի ավելացումն ու որակի բարելավումը, գործարարության և արտադրության (նաև սպասարկման ոլորտի բիզնեսների) փոխհարաբերությունների սերտացումը, բնակչության անապահով հատվածի դերի բարձրացումը՝ տեղեկատվության հասանելիության և առավել արդյունավետ պետական կառավարման միջոցով:

Էլ-կառավարության ստեղծման և ներդրման միջանկյալ ու վերջնական արդյունքներից են. կաշառակերության նվազումը, կառավարման գործընթացների, կառույցների և կառավարչական որոշումների կայացման թա-

փանցիկության մեծացումը, հանրային ընդհանուր կառավարման արդյունավետության, քաղաքակիրթ մակարդակի և հարմարավետության բարձրացումը (հանրության բոլոր հատվածների միջև պաշտոնական գրասենյակներում տեղի ունեցող փոխառնչությունների գերակշիռ մասը տեղափոխելով «հաճախորդներին» առավել մոտ), ներդրումների ու արտահանման աճը, եկամուտների ընդհանրական աճն ու ծախսերի նվազումը, ի վերջո՝ բնակչության աղքատության նվազումն ու երկրի սոցիալ-տնտեսական բարգավաճումը:

Ավանդաբար, քաղաքացու կամ գործարարի և կառավարման մարմինների միջև փոխառնչությունները տեղի են ունենում պաշտոնական գրասենյակներում: Նոր զարգացող տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է ծառայության կենտրոնները տեղակայել հաճախորդներին ավելի մոտ: Նմանատիպ ծառայության կենտրոնները կարող են բաղկացած լինել, օրինակ՝ պաշտոնական գրասենյակում տեղադրված ինքնասպասարկման «կրպակից», հաճախորդին մոտ տեղադրված ծառայության «կրպակից» և տանը կամ աշխատավայրում օգտագործվող անհատական համակարգչից:

Էլեկտրոնային կառավարման սահմանումը

Էլեկտրոնային կառավարումը հեռահաղորդակցության էլեկտրոնային միջոցներով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացման համար անհրաժեշտ և բավարար տեղեկատվության փոխանցումը, ստացումն ու փոխանակումն է:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ հանրության լայն զանգվածներին երաշխավորվում է պետական կառավարման և կառավարչական որոշումների կայացման գործընթացներին մասնակցության հնարավորությունը, և երկրում էլեկտրոնային ժողովրդավարության տարածմանն օժանդակելը:

Էլեկտրոնային կառավարությունը Հայաստանում

Հայաստանում գոյություն ունեն էլ-կառավարության ստեղծման ու զարգացման գործընթացներին անմիջականորեն կամ միջնորդավորված առնչվող բազմաթիվ պետական մասնագիտացված կառույցներ, որոնք են՝ ՀՀ կառավարության վերլուծական-տեղեկատվական կենտրոնը, Կառավարության աշխատակազմի Տեղեկատվայնացման և հատուկ համակարգերի բաժինը, ՀՀ վարչապետին կից Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգաց-

մասն աջակցող խորհուրդը, Տրանպորտի և կապի նախարարության Հեռահաղորդակցության գործակալությունը, Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը և այլն: Հանրապետությունում բացակայում է համապատասխան իրավասու մասնագիտացված մարմինը, որը կոչված է, եթե ոչ մեթոդաբանորեն ու մասնագիտորեն ուղղորդելու, ապա գոնե վարչականորեն կոորդինացնելու պետական կառավարման մարմինների և պետական ոլորտը ներկայացնող կառույցների վեր էջերի ստեղծման գործընթացները, դրանցում փուլ առ փուլ ընդգրկելով տարբեր շահագրգիռ աջակից կողմեր, ի դեմս դոնոր կառույցների, մասնագիտացված կազմակերպությունների, փորձագետների և այլոց:

Ընդհանուր առմամբ, պետական հատվածը, և հատկապես՝ պետական կառավարման տարածքային մարմինները ներկայացնող վեր էջերը պետք է բնութագրվեն հայեցակարգային և կառուցվածքային համասեռությամբ, դինամիկությամբ, համակարգայնությամբ, ձևավորման (դիզայնի) բարձր որակով, միտում ունենան ներկայացնելու ոչ թե առավելապես հիմնարար տեղեկատվություն, այլ այն առանձնահատուկ բարձր տեխնոլոգիական հատկանիշները, որոնց շնորհիվ կարող են հանդես գալ և զարգանալ որպես առցանց (on-line) հաղորդակցման և օգտվողների հետ երկխոսության ու համագործակցության անփոխարինելի միջոցներ, և դադարեն լինել ցածր տեխնոլոգիական: Հետևաբար կարիք կա դրանց ընդհանուր հայեցակարգային, մեթոդաբանական և տեխնոլոգիական լայնածավալ զարգացման, ինչպես նաև ստանդարտացված կառուցվածքի, տեխնոլոգիական գործիքների ու դիզայնի համապատասխանեցման՝ Էլ-կառավարության ներկայացվող չափանիշներին:

Էլեկտրոնային կառավարության օրինակներ

«Էլ-կառավարության» ռազմավարության մշակման և իրականացման գործընթացներն ինչպես վկայում է նաև միջազգային փորձը. այն երկրներում, որտեղ ստեղծված են կամ ստեղծվում են գերազանց (օրինակ՝ Հարավային Կորեա, Սինգապուր) կամ բավականաչափ լավ հաջողված (օրինակ՝ Միացյալ Արաբական Էմիրություններ, Ճապոնիա, Հնդկաստան) Էլ-կառավարության համակարգեր, դրանք, իրենց նախագծման և իրականացման ողջ ընթացքում, հանդիսացել են այդ երկրների բարձրագույն իշխանությունների սևեռուն ուշադրության առարկան:

Ներդրումների աճ՝ էլ-կառավարության միջոցով. Սինգապուրի GeBIZ էլ-կառավարության պորտալ

Սինգապուրի կառավարության էլեկտրոնային Ձեռներեցության Կենտրոնը (GeBIZ) ստեղծվել է 2000թ. հունիսին, որպեսզի պարզեցնի կառավարության գնումների գործունեությունն ու մրցութային միջոցառումները, ինչպես նաև՝ փորձարկելու համար էլ-կառավարության գաղափարը: Ինչպես Սինգապուրում կատարված այլ կապիտալ ներդրումների դեպքում, GeBIZ-ի զարգացման շարժառիթը ռազմավարական է և իր նշանակությամբ ավելին է քան ուղղակի արդյունավետության բարձրացումը կամ խնայողությունը: GeBIZ-ը պիտի ապահովեր գնման գործընթացների կայունություն և թափանցիկություն գործաքնների մեջ, միաժամանակ գործելով որպես ազդակ Սինգապուրում էլեկտրոնային առևտրի զարգացման գործում: Ինտերնետային էլեկտրոնային գնումների այս համակարգի օգտագործումը, մատակարարներին և մրցույթների մասնակիցներին ավելի մատչելի է դարձնում կառավարության կողմից կազմակերպվող մրցույթներն ու գնանշումները: Հասարակական հատվածի գործակալություններն էլ իրենց հերթին զգում են ամենօրյա օգտագործման ապրանքներին էլեկտրոնային գնումների միջոցով կատարելու առավելությունները: 2001թ. սեպտեմբերի դրությամբ GeBIZ-ի սահմանած ընդհանուր գործարքների ծավալն անցել է 50մլն ԱՄՆ դոլարից: Մրցութային հրապարակումներն անցել են 3000-ի սահմանը՝ կազմելով ավելի քան 1.7մլրդ. ԱՄՆ դոլար:

Ինտերնետային հասցե. <http://www.gebiz.gov.sg/>

Թափանցիկություն և պատասխանատվություն. Տեղական ինքնակառավարումը Հարավային Կորեայում

Սեուլի քաղաքային իշխանությունների բարձրագույն օղակում առկա էր անհանգստություն տեղական կառավարությունների տնօրինած թույլտվությունների, արտոնագրերի ու այլ փաստաթղթերի վարման վերաբերյալ պատասխանատվության պակասի ու կաշառակերության առկայության մասին: Այս իրավիճակն ընկավ ՔԱՑ (OPEN) Համակարգի (Online Procedures Enhancement for Civil Applications) ստեղծման հիմքում, որը հակակոռուպցիոն ինտերնետային պորտալ է, և քաղաքացիներին տրամադրում է կարևորագույն տեղեկատվություն, ներառյալ հակակոռուպցիոն միջոցառումների ու արտոնագրերի (թույլտվությունների) տրամադրան կարգի և վարույթի իրականացման ողջ գործընթացի վերաբերյալ:

OPEN համակարգը նաև ներկայացնում է մի հակակոռուպցիոն գործակից (ինդեքս), որն ամփոփ կերպով ցույց է տալիս գործընթացի իրականացման ընթացքում կատարված ուսումնասիրության արդյունքները: Այն քաղաքացիներին տրա-

մադրում է հատուկ տեղեկատվություն՝ նրանց հնարավորություն տալով իրական ժամանակային ռեժիմում հետեւելու թույլտվության (արտոնագրման) գործընթացներին: Նշված տեղեկությունների որոշ մասը կարելի է ձեռք բերել նաեւ թղթային, տպագիր տեսքով, սակայն կարելու է այն է, որ Սեուլի մեծաքանակ ինտերնետ օգտագործող քաղաքացիների համար OPEN-ը վերացրել է կառավարական տեղեկատվությանը հաղորդակցվելու մինչ այդ եղած խոչընդոտները: Ուստի նրանք ավելի լավ են տեղեկացված, կառավարական գործընթացներն ավելի բաց են հասարակության առջեւ, և կաշառակերության ծավալներն այժմ մեծապես կրճատված են: Քաղաքացիների արձագանքները շատ դրական են և արդեն նկատելի է կոռուպցիայի պաշտոնապես արձանագրված դեպքերի աննախադեպ նվազում: Այս բոլոր նվաճումները մեծապես հնարավոր եղան ինտեգրացման դիրքորոշման կիրառման շնորհիվ, հաստատելով, որ տեխնոլոգիական փոփոխություններն ավելի շատ պահպանում են հասարակական հատվածի բարեփոխման նպատակները, քան խոչընդոտում դրանց:

Ինտերնետային հասցե.

Բանական միջնորդները Շրի Լանկայում

ՅուՆԵՍԿՈՅԻ, Շրի Լանկայի Փոստի, հեռահաղորդակցության և լրատվության նախարարության, Շրի Լանկայի Հեռարձակման կորպորացիայի և Շրի Լանկայի Հեռահաղորդակցության կարգավորման հանձնաժողովի համատեղ ծրագիրն օգտագործում է ռադիոն որպես գյուղական բնակչության և ինտերնետի միջեւ կապող օղակ: Օրեկան մեկ ժամ տևողությամբ ռադիոհաղորդումը, որի ընթացքում հաղորդավարը, ունկնդիրների տված հարցերի հիման վրա, ինտերնետից տեղեկություններ է քաղում և հաղորդում, օգնում է հաղթահարել ոչ-անգլախոս բնակչության՝ ինտերնետից օգտվելիս առաջացող լեզվական արգելքը: Ի հավելումն ուղիղ եթերով հեռարձակվող այս հաղորդման, Կոթմալե համայնքային ռադիոկայանը զարգացնում է գյուղական տվյալների բազա, անմիջապես հասարակական դոմեյնի համար հավաքելով այն տեղեկատվությունը, որը կազմվում է ունկնդիրների անեմից հաճախ տրվող հարցերի պատասխանների հիման վրա: Ռադիոկայանը նաև գործում է որպես փոքր ինտերնետ ծառայություններ մատուցող՝ ռադիոյի ունկնդիրների շրջանում գովազդելով երկու համայնքային գրադարաններում տեղակայված ինտերնետ կապի կենտրոնները և ռադիոյում գործող ինտերնետ սրճարանը:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Էլեկտրոնային ուսուցման սահմանումը

Էլեկտրոնային ուսուցման միջոցով կրթությունն իրականացվում է էլեկտրոնային միջավայրում (CD-ROM, ինտերնետ, ինտրանետ, էքստրանետ, հեռուստատեսություն և այլն): Էլեկտրոնային ուսուցումը ներառում է, ինչպես անհրաժեշտ նյութի (թեմայի) բովանդակությունը, այնպես էլ կրթության մեջ կիրառվող գործիքներն ու մեթոդները: Էլեկտրոնային ուսուցում` ուսուցման և կրթական նյութերի ապահովումն է, համակարգչի և այլ էլեկտրոնային գործիքների կիրառմամբ:

Էլեկտրոնային ուսուցումն անհրաժեշտ է, ինչպես երեխաներին, այնպես էլ չափահասներին, որոնք օգտագործում են էլեկտրոնային միջավայրն իրենց ուսուցման և գիտելիքների ձեռք բեռման նպատակով:

Էլեկտրոնային ուսուցման միջոցով իրականացվող դասընթացները կարող են ծառայել առանձնահատուկ կարիքների և դրանք կարող են կիրառվել հեռահար ուսուցումն արտաքին ցանցերի միջոցով խթանելու նպատակով: Էլեկտրոնային ուսուցումն օգնում է նաև ուսուցիչներին իրենց մանկավարժական գործունեությունը կազմակերպելու գործում:

Հեռահար ուսուցումը հանդիսանալով էլեկտրոնային ուսուցման զարգացման հիմնական գործիքը, խնայում է ժամանակը և հաղթահարում է տարածական բոլոր դժվարությունները, որոնք առնչվում են դասընթացներին մասնակցելու և ճանապարհաժախսերի հետ: Առցանց (on-line) ուսուցումը` էլեկտրոնային ուսուցման ձևերից է, որը տարբերվում է վեբ տեխնոլոգիաների կիրառմամբ և ստեղծում է ինտերակտիվ միջավայր:

Էլեկտրոնային ուսուցումը Հայաստանում

Հայաստանում ՏՀՏ ծրագրեր իրականացվել են «Կրթական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (Համաշխարհային բանկ, Կրթության և գիտության նախարարություն), «Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (OSIAF), «Ինտերնետային մուտք և ուսուցում» ծրագրի (IATP), Միջազգային հետազոտությունների փո-

խանակման ծրագրի (IREX), «Ինտերնետ հասարակություն» կազմակերպության Համակարգչային ցանցավորման և ուսուցման կենտրոնի (ISOC) և այլ կազմակերպությունների կողմից, որոնք ուղղված են եղել դպրոցները համակարգիչներով և ինտերնետային կապով ապահովելու և միաժամանակ ՏՀՏ ուսուցում իրականացնելու խնդիրների լուծմանը:

Ներկայումս ըստ ուսումնական ծրագրի դպրոցներում դասավանդվում է Ինֆորմատիկա առարկան, որը հիմնականում հնացած է, ավելի շատ տեխնիկական է և չի տալիս լիարժեք համակարգչային գիտելիքներ: Դպրոցների մի մասում այս առարկան դասավանդվում է առանց համակարգիչների: ՏՀՏ ոլորտում իրականացվող ծրագրերը նախատեսում են հատուկ համակարգչային գրագիտության դասընթացներ ուսուցիչների համար: Համակարգչային գրագիտության դասընթացների նկատմամբ պահանջարկը դպրոցներում շատ բարձր է:

Հայաստանում ինտերնետ կապով ապահովված դպրոցների թիվն աճում է: Գոյություն ունեն մի շարք ցուցիչներ, որոնք բնորոշում են դպրոցներում ՏՀՏ ներգրավվածության մակարդակը և ենթակառուցվածքը: Դրանցից ամենակարևորներն են՝ մեկ համակարգիչին ընկնող աշակերտների քանակը, ներառյալ այն դպրոցները, որոնք չունեն համակարգչային դասարաններ և աշակերտների թիվն ըստ համակարգչային դասարանում տեղադրված մեկ համակարգչի՝ խմբային աշխատանքի դեպքում:

Հայաստանի դպրոցներում համակարգիչներ ներդրվել են 1999թ-ից: Համակարգչային դասարաններ ունեցող դպրոցներում տեղադրված են հիմնականում ժամանակակից սերնդի նորագույն համակարգիչներ (Pentium), թեև որոշ դպրոցներում դեռևս օգտագործվում են հին սերնդի համակարգիչներ (486 PCs): Համակարգիչներն ապահովված են ցանցային կապով՝ ֆայլային և փոստային սերվերի հետ: Ներքին ցանցեր ունեն դպրոցների մեծ մասը: Դպրոցների մի մասն ապահովված են նաև լազերային սկավառակների փոքր գրադարաններով: Ստորև բերված աղյուսակը արտահայտում է Հայաստանի դպրոցներում ՏՀՏ ներգրավվածության և ենթակառուցվածքի վիճակը.

Դպրոցների թիվը	1480
Դպրոցներում համակարգիչների ընդհանուր թիվը	1399
Համակարգչային լաբորատորիաներ ունեցող դպրոցների թիվը	300
Ինտերնետ կապ ունեցող դպրոցների թիվը	84
Համակարգիչների թիվը յուրաքանչյուր դպրոցում ներառյալ սերվերները	4-6

Հայաստանի դպրոցների համակարգչային զինվածությունը 2003թ.

Համակարգիչների օգտագործման հնարավորությունը հիմնականում սահմանվում է դպրոցական կրթական ծրագրով, ինչը որոշակի դեպքերում սահմանափակում է ուսուցիչների և աշակերտների համակարգիչների օգտագործման հնարավորությունները: Որոշ դպրոցներում դասաժամերի ավարտից հետո համայնքի բնակիչներին տրամադրվում է ինտերնետի մուտքի հնարավորություն:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ

Էլեկտրոնային բիզնեսի սահմանումը

Էլեկտրոնային բիզնեսը դա էլեկտրոնային տարբեր միջոցներով (օրինակ ինտերնետ), տեղեկատվության փոխանակումն ու գործարքների իրականացումն է: Էլեկտրոնային բիզնեսն հեշտացնում և արագացնում է բիզնես գործընթացները՝ ինչպես գնող կողմի, այնպես էլ վաճառող կողմի համար:

Գոյություն ունի էլեկտրոնային բիզնեսի 2 մեծ խումբ. Գործարարը սպառողի հետ (Business to Consumer - B2C) և Գործարարը այլ գործարարի հետ (Business to Business - B2B):

Գործարար-սպառող համակարգերը նախատեսված են ինտերնետում ապրանքների վաճառքը առցանց սպառողներին (online shoppers) իրականացնելու համար:

Գործարար-գործարար համակարգերը նախատեսված են մատակարարման շղթան և գործարար կապերը համակարգելու համար:

Էլեկտրոնային կոմերցիայի սահմանումը

Էլեկտրոնային կոմերցիան էլեկտրոնային բիզնեսի պատվերների գործարկման մասն է: Էլեկտրոնային կոմերցիան՝ տեղեկատվության փոխանակում կամ գործարքների իրականացումն է էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով: Այն ներառում է տվյալների էլեկտրոնային փոխանակումը (EDI), էլեկտրոնային փոստը (e-mail), ֆաքսը և նման այլ տեխնոլոգիաներ:

Ինտերնետը տեխնոլոգիական ճանապարհ կամ հասարակական ցանց է, որտեղ իրականանում են էլեկտրոնային կոմերցիան և հաղորդակցության տարբեր տեսակներ: Էլեկտրոնային կոմերցիան, որը իրականացվում է ինտերնետի միջոցով, երբեմն անվանում են նաև ինտերնետային կոմերցիա:

Ներկայումս առկա է նաև Բջջային կոմերցիան, ուր գործարքներն իրականանում են բջջային սարքերի միջոցով, ինչպիսին են բջջային հեռախոսը կամ անձնական թվային օգնականը (PDA):

Էլեկտրոնային բիզնեսը Հայաստանում

Ներկայումս Հայաստանում էլեկտրոնային բիզնեսը գտնվում է սաղմնային վիճակում և նրա զարգացման մեծագույն արգելք է հանդիսանում ինտերնետի միջոցով կատարվող առևտրային գործարքների էլեկտրոնային հաշվարկների ներդրման բացակայությունը:

Հայաստանում Գործարար-սպառող (B2C) էլեկտրոնային բիզնեսի համակարգեր գրեթե գոյություն չունի: Դաշտը կարգավորող օրենքների նախագծերը դեռևս Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու ընթացքում են: Շատ ձեռնարկություններ ունեն վեբ էջեր, բայց հիմնականում տեղեկատվությունը ստատիկ է ու թարմացվում է ոչ հաճախակի: Գործարքների մեծ մասը փաստաթղթային է:

Հայաստանում Գործարար-գործարար (B2B) համակարգը զարգացած չէ: Գործարար պայմանավորվածությունները հիմնականում ձեռք են բերվում ուղղակի հանդիպումների ընթացքում, կամ օգտագործվում են ավանդական հաղորդակցության միջոցները (նամակներ, հեռախոս, ֆաքս):

«Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամ
Հասցե. Չարենցի փողոց 17, 2-րդ հարկ, Երևան 375025, Հայաստանի
Հանրապետություն
Հեռախոս. (374 1) 57 02 60, (374 9) 42 52 27
Ֆաքս. (374 1) 57 02 60
Էլ. փոստ. gateway@e-armenia.am
Ինտերնետային հասցե. <http://www.gateway.am>

Տառատեսակը՝ Times Armenian, շարվածքը և էջադրումը՝
«Մոդուս Աուրեուս» հրատարակչության

Տպաքանակը՝ 1500

© Հեղինակային իրավունքը պատկանում է «Էլեկտրոնային Հայաստան»
հիմնադրամին և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման
ծրագրին, 2004թ.

MODUS AUREUS
PUBLISHING HOUSE